




ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՏԱԲԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՍՈՒՐԲ ԷԶՄԵԱԵՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԵՆՆԵՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ



յս տարի էլ, հունվարի 6-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մեծաշուք հանդիսությունը և ավանդական շքով տոնվեց Քրիստոսի Ս. Ծննդյան տոնը:

Մայր Տաճարը զարդարված էր տոնականորեն: Վաղ առավոտվանից ուխտավորների և հավատացյալների մի մեծ բազմություն, հակառակ բքախառն ձյան և ձմռան եղանակների, մայրաքաղաքից, հեռու և մոտ շրջաններից, գյուղերից ուխտի էր եկել Մայր Աթոռ, Աստվածահայտնության տոնի առթիվ:

Մայր Տաճարում պաշտվում է Ս. Ծննդյան հանդիսավոր ժամերգություն: Տաճարի պատմական կամարների տակ զվարթադին ու խանդավառ հնչում են Ս. Ծննդյան կանոնի հոգեղմայլ շարականներն ու տաղերը:

Ժամը 11-ին նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, Վեհաբանում ղգեստավորված, եկեղեցական թափորով, խնկով ու աղոթքով, հավատացյալների ջերմեռանդ աղոթքների և բարեմաղթությունների տակ, հայրապետական ամպհովանու ներքո առաջնորդվում է Մայր Տաճար՝ մատուցելու Ծննդյան սուրբ պատարագը:

Եկեղեցական թափորի առջևից տարվում են հայրապետական բոլոր, զավաղաճն ու Ս. Խաչը, մինչ ավստավոր ղզղանջում են Մայր Տաճարի դանդերը: Հավատացյալ ժողովուրդը Վեհափառ Հայրապետի հանդիսավոր երթի առաջ իր գլուխն է խոնարհում: Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլորին:

Սուրբ պատարագին սպասարկում են Ս. Սահակ և Ս. Եղնիկ սրբազանները, Ս. Եղիշե և Ս. Մեսրոպ վարդապետները, Մայր Աթոռի սարկավագների ամբողջ խումբը:

Մայր Աթոռի երգչախումբը բառաձայն երգում է Եկմայլանի սուրբ պատարագը:

Ամեն կողմ աղոթք, խոնկ, լույս, վեհություն և խորհրդավորություն: Վերացած աղոթքի թևերի վրա, արցունքն աչքերին, հույսումն ու դողը Իր ձայնի մեջ, սուրբ պատարագ է մատուցում Վեհափառ Հայրապետը Ավագ Սեղանի վրա: Մի անգամ ևս Վեհափառ Հայրապետի սրտարուխ աղոթքի թևերով Միածինը իջնում է երկնքից և պատարագում ու պատարագվում անարյուն ու խորհրդավոր կերպով, հացի և գինու տեսակներով, «Վասն զի դու ես որ մատուցանես և մատչիս և ընդունիս և տաս, Քրիստոս Աստուած մեր», մինչ երգչախումբը խորխառ ու հաղթական հնչեցնում է Ս. Ծննդյան սրբազան մեղեդին՝

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...
Խաղաղութեան ձայն հնչեցաւ...
Եկեղեցիս մի տնձն եղև...»:

Նույն վեհությունը շարունակվում է սուրբ պատարագը մինչև «Հայր մեր»: Այժմ քարոզի պահն է: Եկեղեցում, խորունկ լուծության մեջ, հանդիսավոր ու վեհ հնչում է նորին Ս. Օծության Ծննդյան հուշիչ և բովանդակալից պատգամը, որը լսվում է հետաքրքրությամբ և հոգեկան ուրախությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆԵԴՅԱՆ ՔԱՐՈՋԸ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ», ո՛վ ժողովուրդ հայոց, հեզ մեծ ավետիս:
«Այսօր ծագի արեգակն անշէջ և լուսաւորէ զաշխարհ լուսով արդարո՛ւ-
րեան»:

Մեծ և սքանչելի խորհրդի պահն է այսօր: Վառեցե՛ք լույսերը, սիրելի՛ հայ հավատացյալներ: Վառեցե՛ք հրազը ձեր հոգիներուն, տեսնելու համար ծագու-
մը Արդարության Արեգակին, և լսելու համար հրեշտակներու երգը, որ երկու հազար տարիներէ ի վեր, աշխարհի խղճմտաւէին ձա՛յն կուտա երկնքի բար-
ձունքներէն՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Տառապող բայց միշտ հուսացող մարդկության հազարամյա ոսկի երազն է այս: Դարերու երկունքով, մարդկային գիտակցությունը երկնքի դռները բա-
ցավ, ստանալու համար մեծ ու փրկարար ավետիսը, զոր երանելի զիշեր մը, հսկող հոգիները բարի ու խոնարհ հովիվներուն երկնքէն լսեցին այն պահուն,
երբ Քերդեհեմի մսուրին մեջ կծներ մանուկն Հիսուս, լուսավորելու համար աշ-
խարհը՝ լույսով արդարության:

Հիսուս ծնավ խաղաղության աստվածային պատգամով, Հիսուս ապրեցավ՝
խաղաղություն և սէր բարոգելով, Հիսուս երկինք համբարձավ, մարդոց ու աշ-
խարհին բողոքով մեծ կտակը Իր խաղաղության:

Աստվածորդւոյն ծնունդը նոր, կենդանի շունչ փչեց մարդու հոգեղէն
շինվածքին, լուսավորեց զայն նշմարտության լույսով, զորացուց արդարու-
րյան զրահով, զեղեցկացուց բարության հոգիով, շերմացուց սիրո կրակով,
ազնվացուց խաղաղության տենչով:

Հիսուսի ծնունդը վերածնունդն է մարդուն:

Հիսուսի ծնունդով կնքվեցավ կենաց և խաղաղության ուխտը Աստուծո և
մարդու միջև:

Հիսուսի ծննդյան սիրո և խաղաղության պատգամը՝ հաստատումը եղավ
տիեզերական ներդաշնակության օրենքին, մարդոց աշխարհին մեջ: Խաղա-
ղությունը կրավորական կնքվածք մը չէ, կրավորական կացություն մը չէ, այլ
մարդկային կենդանի ուժերու ներդաշնակ գոյավիճակը՝ արդարության բարո-
յական օրենքին տակ: Զի «պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի
այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն», կրսէ Հակոբոս առաքյալը (Յակ., Դ 18):

Առանց արդարության չկա ներդաշնակություն, առանց ներդաշնակության
չկա խաղաղություն: Բայց մանավանդ, մարդկային աշխարհի՝ արդարության և
խաղաղության աղբյուրը, հաշտությունն է, խաղաղությունն է Աստուծո և մար-
դու միջև: Ով որ խաղաղություն կփնտռէ՝ գնաւով կգտնէ: Եվ բոլոր մարդիկ,
ուշ քէ կանուխ, պիտի մոտենան Քերդեհեմի մսուրին: Ականջ դրե՛ք Պաղոս ա-
ռաքյալի խոսքերուն՝ «Ձխաղաղութեան գնես երթայք ընդ ամենեսին՝ և սրբու-
րեամք, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր» (Եբր., ԺԲ՝ 14): Լսեցե՛ք և հետեւե-
ցե՛ք մեծ առաքյալի պատգամին: Սիրելի՛ք Մեր, «ողորմութիւն ձեզ՝ և խաղա-
ղութիւն և սէր բազմացի» (Յուդա, Ա 2):

Տարին, որ անցավ, խաղաղության տարի մը չեղավ, ավա՛ղ, աշխարհի հա-
մար: Շարունակվեցավ «սառը» կռիւն պատերազմը, և պահ մը եռլեռիս կրակ
տեղաց ձեր նեղոսի ավերուն, հուզում և երկյալ տարածելով դեպի բոլոր հո-
րիզոնները մեր վշտահար երկրագունդին: Վասնզի ժողովրդի մը խաղաղ կյան-
քը վրդովել ու անարդարություն ընել անոր, սպառնալիք մըն է բոլոր ժողո-
վուրդներուն համար:

Ահա քե ինչու Մենք, որպէս առաջին սպասավորը և աղոթողը Հայաստան-
յայց Առաքելական եկեղեցւոյ, Միաձնի Իշման Ս. Սեղանի առաջ, հուսացյալ
սրտով, անդադար և անձանձուր պիտի աղերսենք բարյաց Պարգեատունն՝
«զխաղաղութիւն Քո տո՛ւր մեզ, Տէ՛ր», «խաղաղութիւն հեռաւորաց և մերձա-
ւորաց», «խաղաղութիւն ամենեցուն»:

Եվ եւոյն Ս. Սեղանի առաջ ձեկաշոք Մեր գոհության աղոթքը պիտի կար-
դանք առ Աստված, որ Մեր փոքրիկ հոտի՝ հայ ժողովրդի մէկ մասը գտնէ, իր
պատմական Հայրենիքի սրտի վրա, Արարատյան դաշտին վրա ամփոփված,
ապրի խաղաղ ու ապահով, լծված շինարար աշխատանքի, Լորայրական խա-
ղաղասէր ժողովուրդներու մեծ ընտանիքին մեջ:

Տարին, որ անցավ, փառք Ամենակալին, խաղաղության և շինության տարի մը եղավ Հայաստանյայց եկեղեցիին համար և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Հավատացե՛ք, որ Աստված երեսը Մեզ է դարձուցած և Իր լույսով կառաջնորդե մեր քայլերը և մենք՝ Բահանայի և Ժողովուրդ, նոր հավատով և նոր հույսերով խանդավառ, սկսած ենք շինել, շինել ինչ որ անցյալի մեջ չար ձեռքեր Բանդեցին, դարեր ու տարիներ շարունակ: Այսօր, Հայաստանյայց եկեղեցին իր աստվածակառույց Մայր Աթոռով կրնա գոհունակությամբ ողջունել նոր տարին, վասնզի անցնող տարին եղավ ոչ միայն ներքին խաղաղ աշխատանքի տարի մը, այլ մանավանդ շրջան մը կազմակերպչական և շինարարական իրագործումներու: Աստուծո ռդարմությամբ, հայ ժողովրդի հավատով և մեր հայրենի բարեխնամ կառավարության ուշադիր բարյացակամությամբ, Մենք կարողացանք իրագործել Մեր ծրագրերու մեկ մասը: Ավարտեցավ, ինչպես կոեսնեք, Մայր Տաճարի ներքին մարմարապատումը, շրջափակի սալապատումը և ճանապարհներու ասֆալտապատումը: Այս օրերս մեզ կհանձնվի Վեհաբանի նոր պալատը, որուն վերանորոգման աշխատանքներ ծրագրած ենք սկսիլ այս ամառ: Միաժամանակ պիտի սկսինք աշխատանքները տպարանի շենքի վերակառուցման և ընդլայնման, այնտեղ կարենալ գետեղելու համար տպագրական մեքենաները, գորս կապասե՛ք ընդունելի հառաջիկային ամերիկահայ մեր հավատացյալներեն, որոնց անունը անգամ մը և պիտի փառավորվի իրենց այս պատմական նվիրատվությամբ, և իր ժամանակին պիտի հռչակվի այդ Մեր հայրապետական հատուկ կոնդակով, Բանդակով՝ սրբատաշ մարմարի վրա, իբրև հիշատակ մեր հաջորդ սերունդներուն:

Մեր սիրտը ուրախությամբ ու հպարտությամբ կլեցվի տեսնելով օրե օր անող ու հոգևոր մարմին առնող միաբանական կյանքը Մայր Աթոռեն ներս: Մերունագարդ փոքրաթիվ հոգևոր հայրերու կողքին կհասունանան և պողաբեր կդառնան մեր երիտասարդ միաբաններ՝ ի շինություն մեր ժողովրդի հոգևոր կյանքին:

Մեր Հոգևոր ձեմարանը նույնքան գոհունակություն կպատճառե Մեզ իր անով և սաներու մտավոր ու հոգևոր զարգացման մակարդակով: Անցյալ տարի Բաճ Էին անոնք, այս տարի Բառասունյոթը եղան, երկու տարի հետո պիտի դառնան հարյուր: Միրելի՛ երիտասարդ միաբաններ՝ վարդապետներ, արքեպեպոստոսներ և սարկավագներ, և ձեմարանի սաներ, դուք մեր հույսն եք, մեր կյանքի զարուհը, մեր եկեղեցիին ապագան և ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր գործերով պիտի կարողանաք մեր պարծանքը դառնալ:

Մեր սրտերը սուրբ զգացումներով և անհուն հրեմվանքով կլեցվին՝ տեսնելով հավատքի ալիք, որ կբարձրանա հաղթական մեր ժողովրդի հոգիին մեջ, տեսնելով, քե ի՛նչպես եկեղեցիները հետգհետե կվերանորոգվին և կվերաբացվին Հայաստանի մեջ, և հետգհետե ավանդական կազմակերպչական ձև կստանա ներքին քմերու հոգևոր-եկեղեցական, վարչական, տնտեսական կյանքը: Հայաստանի մեջ այսօր կգործեն արդեն հիսուն և երկու եկեղեցիներ, վանքեր և ուխտատեղիներ, և սույն տարվա ընթացքին պիտի վերաբացվին նաև մյուս նախատեսված եկեղեցիները: Վստան ենք նույնպես, քե այս տարի պիտի վերաբացվին եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի առաջադրված հայ եկեղեցիները, պատկան իշխանությանց բարյացակամությամբ:

Անշուշտ ընելիք շատ բան կա տակալին: Չենք ծածկեր ոչ ոք, որ դեռ բավարար կատարելության չենք հասած. չենք ծածկեր, որ տակալին քերու-քյուններ ունինք և ղովարությանց կրախինք: Բայց հիմնական, վեճական տրվ-յալներն ու պայմանները կան, որով ապահովված կնկատենք Մեր բոլոր ծրագրերու կենսագործումը: Մայր Աթոռի միաբանության և առհասարակ հայ հոգևորականության առջև աշխատանքի այնպիսի լայն ասպարեզ կբացվի այսօր, ինչպիսին քիչ անգամներ ունեցած է մեր եկեղեցին իր ալեկոծ պատմության ընթացքին:

Սուրբ Մենայան ավետիսով, Մենք պիտի ուզեինք վերստին հավաքումի կոչել մեր հավատացյալ ժողովուրդը և Հայաստանյայց եկեղեցվո բոլոր ուխտյալ սպասավորները, մեծով և պզտիկով, որպեսզի հավատքի հուրով և միություն կամով շաղախված, դառնայինք իրավ եկեղեցի մը, այսինքն հոգևոր մեկ մարմին: Մի, անբաժանելի և անսասանելի:

Սուրբ հավատքի միությունը հայ ժողովրդի գոյության գորավորագույն ամրոցն է, մանավանդ Սփյուռքի կյանքի պայմաններում մեջ: Հավատով ու միության մեջ պիտի կարողանանք լեռներ շարժել:

Անհամբերությամբ և սրտի տրոփյունով կապասենք 1957 տարին, որ Մեր եկեղեցիի կյանքին մեջ պիտի կարենա պայծառ հետք մը բողոք, երև հաշո-ղիւնք Մեր մեծ ծրագրեր գործադրել սկսիլ: Սկսիլ կըսենք, որովհետեւ, ինչպես ծանօթ է ձեզ, ավարտումը կենսատեսեսեն 1961-ին: Այդ ծրագրի գլխավոր առաջադրություններն են՝ վերաշինությունը Հոփսիսի, Գայանի, Շողակա-րի, Օշականի, Խոր-Վիրապի, Գեղարդի և Բջնիի սուրբ տաճարներուն, վերաշի-նությունը նոր Վեհարանին, տպարանի շենքին, հին սեղանատան, Ղազարա-նությունը նոր Վեհարանին, ինչպես նաև հաստատումը Մայր Աթոռին ներս՝ կեդրոնական շէնքում, ջրամատակարարման և էլեկտրականության նոր սարքավորումներուն և այլն:

Մասնավոր կարևորությամբ կուգենք նշել, այս նոր տարվա սեմին, որ մտադրած ենք Ս. Էջմիածնի մեջ հիմնել հայ եկեղեցական նկարչության աշ-խատանոց մը, որուն նպատակը ըլլա սրբապատկերներ նկարել հայ մանրա-նկարչական ոճով: Մեր մտածումն է մեր եկեղեցիները օծուել այնպիսի սրբա-պատկերներով, որոնք իրենց ոճով և գեղարվեստական արժեքով, մոտենան գեթ մեր փառավոր ճարտարապետության և մեր փառակերտ զարդաքանդակնե-րու անհատ ձևերուն:

Անցնող տարին մխիթարական եղավ Մեզ համար նաև այն իրողությամբ, որ ի սփյուռս աշխարհի ապրող մեր հավատացյալներու հոգեւոր սերը և հավա-տարմությունը դեպի Մայր Աթոռ առավել անեցավ, առավել խորացավ: Թե՛ արտասահման Մեր նաեւպարհորդության բերացին, թե՛ անկե հետո, բազում առիթներով և բազում ձևերով արտահայտվեցան գաղութահայ Մեր ժողովրդի հարազատ զգացումները դեպի ամենայն հայոց լույս հավատքի կեդրոն Ս. Էջ-միածինը: Այդ զգացումները արտահայտվեցան նաև կարեւոր նվիրատվություն-ներով՝ ի պայծառություն Մայր Աթոռին և Հոգեւոր Ճեմարանին: Օրհնյալ ըլլան անոնք բոլորը: Վստահ ենք, թե արտասահմանի Մեր զավակները, ոգեշնչված իրենց նախնայոց հավատքի լույսով, պիտի կամենան ամեն մեկը փառ մը ավելցնել՝ ավելի՛ արագ, ավելի՛ ամուր և ավելի շքեղ շինելու և՛ վերաշինելու համար մեր բազմադարյան սուրբ տաճարները՝ անկարճելի փառք հայոց հավատքին ու հանճարին: 1956-ի բերացին անհուն բերկրանքով դիմավորե-ցին հայ ուստավորներու խմբերը, որոնք հեռավոր երկիրներէ եկան Մայր Երկիր և այցելեցին այս Ս. Տաճար՝ Ս. Էջմիածինը: Նոյն հուզումով և հայ-րական նոյն սիրով պիտի սպասենք, որ նաև 1957-ին շարունակվին ուստա-գնացությունները ու այսպիսով վերահաստատվի մեր ժողովրդի այս նվիրական ավանդությունը, որ այնքան կենսաւոր ու հոգեպարար եղած է մեր նախորդ սերունդներուն համար դարեր շարունակ: Սփյուռքի հայության կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ հոգեւոր-բարոյական կապ է միայն և այդ իսկ է հայ հավատքի և ազգի միության երաշխիք:

Սիրելի՛ հավատացյալ պանդուխտ որդիներ Մեր, ձեր հավատով, ձեր հավատարմությամբ, ձեր միության ու ձեր բարի գործերով, «պոք էք փառք մեր և խնդրիր» (Ս. Թեա., Բ 20):

Անցնող տարին խաղաղության տարի մը չեղավ, ավստ՛ս, մեր նվիրապե-տական Աթոռներէն երկուքին համար: Երուսաղեմի Պատրիարքական մեր Աթոռը ներքին շատ լուրջ տագնապ մը անցուց, բայց փա՛ռք Տիրոջը, շուտով իրցավ հասնիլ հոգեւոր կարգապահության, հոգեւոր շինության և խաղաղության ափին, իր փաշարի միաբանությամբ ու ժողովրդով: Իսկ անդին, Տանն Կիլի-կիո Կաթողիկոսության ծոցին մեջ հառաջ եկավ ժամանակավրեպ և ոչ ոքի օգուտ չբերող երևույթ մը, այն է՝ շեշտված ձգտում մը հերձվածի, որուն իբրև հետևանք, և հակառակ Մեր բոլոր ջանքերուն, ստեղծվեցավ ցավալի երկփեղ-կում մը միաբանության և ժողովրդին մեջ: Այս տագնապը, արտասահման ումանց զգայնության մեջ ինչ համեմատություններ ալ ստանա, կմնա Մեզ հա-մար անցողական և իմաստե գուրկ երևույթ մը, պարզ անկարգություն մը մեր եկեղեցվո հազարամյա պատմության նաեւպարհին վրա: Տխուր է սակայն հաստատել, թե այս տագնապի խոր և իրավ պատճառը՝ ամենայն հայոց հա-

վատֆի վեմ՝ Մայր Աթոռն ու Մայր Հոգին, ոմանց, հոգեպես կտրված քյալն է, որ զանոնք կտանի անխուսափելի կերպով դեպի կորուստ, ուշ կամ կանուխ, երբ հերձվածը շարունակվի: Ահա քե ինչո՛ւ Մեր նվիրական պարտքը կհամարենք հորդորել բոլորը, առանց խտրության, որ Եկեղեցիին և Եկեղեցական կյանքին մոտենան սուրբ հավատով և հոգևոր մտահոգությամբ մի՛այն և միայն, հեռու կենան Եկեղեցին որպես միջոց ծառայեցնել, առաջնորդվին ավետարանական սիրով, խաղաղության ոգիով, առանց կրֆի, առանց բենի, այլ իմաստությամբ, հանդարտությամբ, հեռատեսությամբ և մանավանդ հայ հավատֆի ու ազգի միության ոգիով:

Մենք և Մեզ հետ միասին մեր բոլոր նվիրապետական Աթոռները, մեր բոլոր հոգևորականներն ու հավատացյալ ժողովուրդը անգամ մը ևս ուխտենք այս սուրբ պահուն՝ հավատարիմ մնալ մեր հախնյաց հավատֆին, Միածնի իջման ամենասուրբ խորհրդին, մեր պատմության, մեր հարազատ ժողովրդին և մեր Մայր Երկրին:

Այսօր, մանավանդ այսօր, մեր աշխատանքը խոր ու կենսագործիչ իմաստ մը սկսած է ստանալ մեր ժողովրդի ամենալայն զանգվածներուն և մտավորականության գիտակցության մեջ: Այսօր հայ ժողովուրդը իր հոգին եկեղեցի կրերն, աստվածային հուրով արգասավորելու համար զայն: Մենք զմեզ կզգանք հայ ժողովրդի բազմադարյան պատմության ուղիղ ճամբուն վրա:

Այստե՛ղ, ուր Մենք ենք կանգնած այս արագան պահուն, այստե՛ղ, և մի՛այն այստեղ խոսած է Աստված հայ ժողովրդին, այստե՛ղ, հայոց աշխարհի սրտին մեջ, հաստատված է վեմը մեր հավատֆին, մեր կյանքին, այստե՛ղ է մեր մայր ժողովուրդը, այստե՛ղ է վերածնած Հայ պետությունը, այստե՛ղ է հայ հանճարի աղբյուրը և ներշնչարանը, այստե՛ղ է հայոց պատմությունը, այստե՛ղ է մեր ապագան, այստե՛ղ է Լուսավորչի անմար կանթեղը, այստե՛ղ է հավերժական Արարա՛սը:

Տե՛ր Աստված «ճարցն մերոց», եղիր հովանի և պահպան մեր աշխարհին, Հայաստան աշխարհին, և պահե, պահպանե հայ ժողովուրդը ապահով ու անվրդով, ամբողջ ու անասան: Եվ, ո՛վ Տե՛ր, հայոց երկնֆին տակ այժմ և միշտ խաղաղությո՛ւն բող քյալ:

Խաղաղությո՛ւն ձեզ բոլորիդ, սիրելի՛ հավատացյալ զավակներ Մե՛ր:

Խաղաղությո՛ւն ձեր սրտերուն, ձեր մտածումներուն, ձեր տեսիլներուն:

Խաղաղությո՛ւն ձեր տուններուն, ձեր սեղաններուն, ձեր սիրելիներուն:

Խաղաղությո՛ւն ձեր համայնքներուն, ձեր եկեղեցիներուն:

Խաղաղությո՛ւն և սե՛ր, միության և հոգևոր շինության մեր նվիրապետական Ս. Աթոռներուն՝ Տանն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին, Ս. Նրուսաղեմի Հայոց Պատրիարքական Աթոռին, Կոստանդնուպոլսո Հայոց Պատրիարքական Աթոռին:

Խաղաղությո՛ւն Սփյուտֆի հայ ժողովուրդը հյուրընկալող բոլոր բարի երկիրներուն և ժողովուրդներուն:

Խաղաղությո՛ւն, բարօրությո՛ւն և անասանությո՛ւն մեր մեծ Հայրենիքին՝ Խորհրդային Միության և եղբայրական բոլոր ժողովուրդներուն:

Խաղաղությո՛ւն, յո՛ւյս և հավետ փա՛ռք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիին և ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

«Տե՛ր Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից և տես, այց արա այգույս այսմիկ. և դարման տար սմա, զոր տնկեաց Աջ Քո», և «դարձո զմեզ, երևեցո զերեսս Քո ի մեզ և կեցցո՛ւք» (Սաղմոս ԶԹ, 15—20):

Սիրելի՛ հավատացյալներ մեր, Ս. Մենդյան և Աստվածահայտնության մեծ և սխանչելի ավետիսով կողջունենք և կօհնենք զձեզ, բոլորիդ մաղբելով խաղաղ, բարի ու երջանիկ տարի մը:

«Սե՛ր և խաղաղությո՛ւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ, ամէն»:

